

Պատասխաններ  
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի  
մարզային փուլի – 2024-2025 ուս. տարի  
**11-12 դասարան**

1. ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-ճիշտ; դ-սխալ; ե-ճիշտ; զ-սխալ; է-սխալ; ը-ճիշտ (յուր՝ **0.25միավոր**)

2. Ֆիլիպիններ (**1միավոր**)

3. դ. սննդի արդյունաբերություն (**1միավոր**)

4. ա. Ներկայացված երկրներում նպատակահարմար է վարել ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն, որը միտված կլինի ծնելիության ցուցանիշի բարձրացմանը (**0.5միավոր**): Սա պայմանավորված է տարեցների՝ երեխաների նկատմամբ քանակական գերակշռությամբ, որը վկայում է ազգերի ծերացման մասին, այստեղից բխող բոլոր բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներով: Նման հետևանքների օրինակներ են ակնկալվող աշխատանքային ռեսուրսների անբավարարությունը, տնտեսական ակտիվության անկումը, սոցիալական ծախսերի աճն ու սոցիալական ծառայությունների ծանրաբեռնվածության աճը և այլն (**0.5միավոր**):

բ. Հարավային Կորեան (**0.5միավոր**): Բնակչության տարիքային կազմից երևում է, որ Հարավային Կորեան գրանցել է աշխատանքային ռեսուրսների քանակի ամենամեծ հարաբերական աճն ու նշված երկրների շարքում ներկայումս ունի աշխատունակ տարիքի բնակչության ամենամեծ բաժինը, ինչը տնտեսության զարգացման կարևորագույն խթաններից է (**0.5միավոր**):

գ. Ճապոնիայի (**0.5միավոր**): Երեխաներն ու տարեցները, որոնք միասին կախյալ բնակչությունն են, ամենամեծ բաժինն ունեն Ճապոնիայում: Սոցիալական ծառայությունների ծանրաբեռնվածության մեծ մասն ապահովում են հենց այդ խմբերի բնակչությունը: Ընդ որում, տարեցներն ավելի շատ սոցիալական ծառայությունների կարիք ունեն, իսկ Ճապոնիայում այդ խումբը շատ ավելի մեծ բաժին ունի՝ համեմատած մյուս երկու երկրների հետ (**0.5միավոր**): Աշակերտը կարող է չկիրառել կախյալ բնակչություն արտահայտությունը, սակայն լիարժեք միավոր կստանա միայն բովանդակորեն մոտ պատասխան ներկայացնելու դեպքում:

5. ա. Օրական ջրապահանջը կկազմի  $2000\text{մարդ} \times 300\text{լ/օր} = 600000\text{լ}$  կամ  $600\text{մ}^3$

Աղբյուրի օրական հոսքն է՝  $W_{\text{օր}} = 0.01\text{մ}^3/\text{վրկ} \times 24\text{ժ} \times 60\text{ր} \times 60\text{վրկ} = 864\text{մ}^3$ : Այո, բավարար է:

Ջուտ հաշվարկային-տեխնիկական սխալի դեպքում շնորհել առավելագույնը **0.5միավոր**: Ցանկացած բովանդակային սխալի դեպքում միավոր չի տրվում:

բ. Քաղաքային ուղևորաշրջանառությունը =  $40\text{մլն} \times 3\text{կմ} = 120\text{մլն}$  ուղևոր-կմ

Վերգետնյա տրասնպորտի ուղևորաշրջանառությունը =  $30\text{մլն} \times 2\text{կմ} = 60\text{մլն}$  ուղևոր-կմ

(**0.5միավոր**)

$120\text{մլն}$  ուղևոր-կմ -  $60\text{մլն}$  ուղևոր-կմ =  $60\text{մլն}$  ուղևոր-կմ (**0.5միավոր**)

Ջուտ հաշվարկային-տեխնիկական սխալի դեպքում խնդրի յուրաքանչյուր բաղադրիչի համար շնորհել առավելագույնը **0.25միավոր**: Ցանկացած բովանդակային սխալի դեպքում միավոր չի տրվում:

6. ա. Ավստրիա, Չեխիա, Լյուքսեմբուրգ, Սլովակիա

բ. Մասիս, Ջիլո, Սիփան, Արագած: Ընդունել նաև Մաբալան լեռը

Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ նշված պատասխանի դեպքում միավորը նվազեցնել 0.25-ով:

7. Բրատսկի, Գրանդ Կուլի, Իտայպու, Երեք Կիրճեր: Յուրաքանչյուր դիրքում ճիշտ պատասխանը նշելու պարագայում աշակերտին շնորհել **0.25միավոր**:

**8. ա.** Մեծ կենսաբազմազանությանը նպաստել են երկրաբանական անցյալում կլիմայի էական փոփոխությունները, որոնք հանգեցրել են բազմաթիվ տեսակների միգրացիաների տարբեր գոտիների միջև և Հայաստանի տարածքում հաստատվելուն: Մեծ դեր է ունեցել նաև լեռնային ռելիեֆը, որի պայմաններում ձևավորվել է վերընթաց գոտիականություն և բնության պայմանների մեծ բազմազանություն՝ նպաստավոր պայմաններ ապահովելով տարբեր տեսակների համար: Կարևոր է նաև աշխարհագրական դիրքը, քանի որ ՀՀ տարածքը բուսակենդանական մի քանի շրջանների շփման գոտում է և պարունակում է դրանց բազմաթիվ տեսակներ: Երկու գործոններ հիմնավոր ներկայացնելու դեպքում շնորհել **0.75 միավոր**, իսկ մեկ գործոնի լիարժեք ներկայացման դեպքում՝ **0.5 միավոր**:

**բ.** Հիմնական պատճառներներից կարելի է նշել. 1) ածխով աշխատող նոր էլեկտրակայանների կառուցման արգելքը; 2) բազմաթիվ ածխով աշխատող հին էլեկտրակայանների փակումը; 3) Տրանսպորտային շարունակական բարելավումը և հատկապես էլեկտրական մեքենաների մեծաքանակ օգտագործումը; 4) Անտառավերականգնման և անտառհիմնման մեծածավալ ծրագրերի իրականացումը: Ցանկացած երեք հիմնավոր պատճառներ ներկայացնելու դեպքում տալ **1 միավոր**, երկու հիմնավորված պատճառի պարագայում՝ **0.5 միավոր**, մեկի պարագայում՝ **0.25 միավոր**:

**9. ա.** Ֆրեոն գազերն ունեն սառեցնող հատկություն, հետևաբար կիրառվում են ամենատարբեր սառեցման համակարգերում՝ սառցարաններում, օդորակիչներում (**0.5 միավոր**): Ֆրեոն գազերը միաժամանակ ջերմոցային գազեր են, հետևաբար նպաստում են կլիմայի գլոբալ տաքացմանը և նաև քայքայում են օզոնի շերտը (**0.5 միավոր**):

**բ.** Չնայած երկու տարատեսակներն ունեն նվազման, իսկ երկուսը՝ աճի միտում, սակայն ընդհանուր առմամբ աճն ավելի մեծ է, քան նվազումը: Հետևաբար ֆրեոն գազերի կոնցենտրացիան մթնոլորտում ընդհանուր առմամբ աճում է (**0.5 միավոր**): Ֆրեոն գազերի արտանետումների նվազեցման ուղիներից են դրանց փոխարինումը այլ նյութերով, սառեցնող համակարգերի տեխնոլոգիական կատարելագործումը, քաղաքային միջավայրում կանաչապատումն ու ջերմային աղտոտումը նվազեցնելուն միտված այլ գործողությունների իրականացումը, որը կհանգեցնի օդորակիչների պահանջարկի նվազման: Կարելի է ընդունել նաև իրավական լուծումների առաջարկը, ինչպիսին են ֆրեոնի արտադրության արգելքը կամ ֆրեոնի կիրառման դեպքում մեծ հարկերն ու տուրքերը, որոնք ֆրեոնի օգտագործումը դարձնում են պակաս գրավիչ (**0.5 միավոր**):

**10. ա.** Ռեսուրսների ազգայնացումը տվյալ երկրի ռեսուրսների նկատմամբ պետական սեփականության վերականգնումն է (**0.25 միավոր**): Վերջին տասնամյակներին առավել հաճախ է Աֆրիկայում (**0.25 միավոր**): Նպատակը բնական ռեսուրսների շահագործումից պետական եկամուտների ավելացումն ու տեղական համայնքների զարգացմանը նպաստելն է: Որոշ երկրներում ռեսուրսների մասնակի ազգայնացում է տեղի ունենում՝ բաժնետոմսերի մի մասը տեղական համայնքներին փոխանցելու միջոցով (**0.5 միավոր**): Ռեսուրսների ազգայնացումը մեծացնում է տվյալ երկրի հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների ռիսկայնությունը, նվազեցնում է երկրի միջազգային վստահելիությունը և նվազեցնում է արտասահմանյան կապիտալ ներդրումների չափը, քանի որ հանքարդյունաբերությունը ի սկզբանե պահանջում է մեծածավալ ներդրումներ (**1 միավոր**):

11. Ա- 2; Բ- 4; Գ- 5; Դ- 3 (յուր. 0.5 միավոր)